



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոտեղեկատվության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023


Օգոստոսի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոտեղեկատվության բաժինը՝ մասնագիտացված ագրոտեղեկատվության կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Օգոստոսի առաջի տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայից բարձր 2-3 աստիճանով:



Ամենաբարձր ջերմաստիճանները Տավուշում գրանցվել է +34...+37°C Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +29...+31°C, նախալեռնային շրջաններում՝ +39...+41°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +38...+40°C, նախալեռնային շրջաններում՝ +31...+33°C, Շիրակում՝ +33...+36°C (Աշոցք՝ +29°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +29...+33°C, նախալեռնային շրջաններում՝ +34...+36°C, Գեղարքունիքում՝ +28...+32°C, Լոռիում՝ +30...+33°C, Արմավիրում՝ +38...+40°C, Արարատում՝ +40...+42°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +28...+30°C, նախալեռնային շրջաններում՝ +34...+38°C (Աշտարակ՝ +40°C):


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 1-ին, 5-ին. Տավուշում +16...+18°C (Դիլիջան՝ +11°C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +9...+11°C, նախալեռնային շրջաններում՝ +17...+19°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +18...+22°C, նախալեռնային շրջաններում՝ +10...+12°C, Շիրակում՝ +8...+13°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +7...+12°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18°C, Գեղարքունիքում՝ +8...+12°C, Լոռիում՝ +9...+14°C, Արմավիրում՝ +16...+20°C, Արարատում՝ +18...+20°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +7...+10°C, նախալեռնային շրջաններում՝ +15...+19°C:

Տասնօրյակային տեղումներ



Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 0.5-26մմ (3-177%), Լոռիում՝ 4-45մմ (24-200%), Տավուշում՝ 5-21մմ (74-115%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 11-47մմ (70-209%), նախալեռներում՝ 0.3-12մմ (3-326%), Գեղարքունիքում՝ 1-32մմ (57-229%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 7-32մմ (70-434%), նախալեռներում՝ 4մմ (92%), Արմավիրում՝ 3-6մմ (138-214%), Արարատում՝ 0.8մմ (17%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 1մմ (20%), նախալեռներում՝ 3մմ (71%), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ տեղումներ չեն դիտվել, նախալեռներում՝ 2-3մմ (23-61%):


Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Օգոստոսի առաջին տասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային շրջաններում գրանցվել են +4...+8°C, Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածոտնի նախալեռներում՝ +14...+18°C, Վայոց ձորի նախալեռներում, Սյունիքի հովտային շրջաններում՝ +18...+20°C աստիճան:


**Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային տվյալների
(օգոստոսի առաջին տասնօրյակ)**

Օգոստոսի առաջին տասնօրյակի NDVI արժեքները



Բուսականության նորմալացված տարբերության ինդեքսը (NDVI) ֆոտոսինթետիկ ակտիվ կենսազանգվածի ցուցիչն է: NDVI-ը սահմանում է -1.0 -ից մինչ 1.0 արժեքներ, որտեղ բացասական արժեքները համընկնում են բուսազուրկ տարածքներին: Ելնելով LANDSAT 8 արբանյակի տվյալների տարածական վերլուծությունից հստակ երևում է, որ օգոստոսի առաջին տասնօրյակում երաշտային պայմաններ են դիտվել Արարատյան դաշտում, Արագածոտնի և Կոտայքի նախալեռնային, Սյունիքի հովտային շրջաններում:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



**Գյուղատնտեսական
կատարման պայմանները**

աշխատանքների

Տասնօրյակի ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական մշակաբույսերի աճը, զարգացումը և դաշտային աշխատանքները: Ողջ հանրապետության տարածքում կատարվել է պտղատուների, հացահատիկային և բանջարանոցային մշակաբույսերի բերքահավաք:



Հացահատիկային մշակաբույսեր

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը հասունացել է, կատարվել է բերքահավաք: Գարնանացան ցորենը գտնվել է մոմային, իսկ գարնանացան գարին՝ կաթնային հասունացման փուլերում:

Նախալեռնային շրջաններում շարունակվել է եգիպտացորենի կողրի ծաղկումն ու հասունացումը, բույսի բարձրությունը տասնօրյակի վերջում կազմել է 192սմ:

Պտղաբույսեր, խաղող

Լեռնային և նախալեռնային շրջաններում շարունակվել է հնդավորների պտուղների ձևավորումը, որոշ վաղահաս սորտեր հասունացել են, կադարվել է բերքահավաք:

Հովրային շրջաններում թուզը հասունացել է, կադարվել է մասնակի բերքահավաք, շարունակվել է արքայանարինջի ու սերկևիլի պտուղների ձևավորումը: Շարունակվել է խաղողի միջահաս սորտերի (կախեթ, գառան դմակ) հասունացումը:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել պտղաբույսերի և խաղողի հասունացման, ինչպես նաև շաքարային նյութերի կուտակման համար:



Բանջարանոցային մշակաբույսեր և կարտոֆիլ



Լեռնային և նախալեռնային շրջաններում շարունակվել է բանջարանոցային մշակաբույսերի հասունացումը:

Շարունակվել է կաղամբի գլխի փաթաթումը: Կարտոֆիլի ծաղկումն ավարտվել է, որոշ շրջաններում դիտվել է տերևուքի թառամում:

Հովրային շրջաններում շարունակվել է բանջարանոցային մշակաբույսերի և ձմերուկի հասունացումն ու բերքահավաքը:

Խոտաբույս, ծխախոտ

Հովրային շրջաններում շարունակվել է առվույտի ցողունի աճը, բույսի բարձրությունը հասել է 25սմ-ի: Կորնգանը ծաղկել է, բույսի բարձրությունը տասնօրյակի վերջում կազմել է 44սմ:

Դիտվել է ծխախոտի 15-րդ տերևների առաջացումը:



